

## «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

**ՊԱՇՏՈՆԸ**  
**ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ**  
**ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**  
**ՎԱՅԻՆԸ**

«Բերդ» մասնաճյուղի գործավար  
Լրիվ աշխատաժամանակ  
անորոշ ժամկետով  
ՀՀ, ք. Բերդ

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Բերդ» մասնաճյուղի գործավարի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են մասնաճյուղի փաստաթղթաշրջանառության կազմակերպման աշխատանքների կոորդինացումը, հսկողությունը և իրականացումը:

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատասխանում է հեռախոսազանգերին, գրանցում է հաղորդագրությունները, կատարում է փաստաթղթերի պատճենահանման, ֆաքսի աշխատանքներ, ինչպես նաև նամակագրության, հաճախորդների և աշխատակազմի հետ կապված հասարակական աշխատանքներ:
- Հետևում է աշխատակազմի աշխատանքային ժամերի/հաճախելիության ցուցակին և բացակայության հարցերին:
- Հետևում է գրասենյակի աշխատակազմի աշխատանքային կարգապահությանը համապատասխան Ընկերության ներքին ընթացակարգերի և կարգերի:
- Իրականացնում է Մասնաճյուղին ամրակցված տրանսպորտային միջոցների երթուղիների բաշխումը, կատարած վազքի հաշվառումը և դրա հետ կապված տեղեկատվության գրանցումները:
- Ապահովում է տեղեկատվական ֆայլերի պարբերական կրկնօրինակումը և նրանց պաշտպանվածությունը:
- Կատարում է կանոնավոր գույքագրում, ապահովում է համապատասխան փաստաթղթերի և ստացականների առկայությունը՝ ապրանքների վճարի, առաքման վերաբերյալ:

### ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿՎՎՈՐՈՒՄՆԵՐ

- Մեկ տարի հաճախորդների սպասարկման ոլորտում /գործավարի, օգնականի և/կամ այլ հարակից պաշտոններում/:
- Հաղորդակցման հմտություններ:
- Պատասխանատվություն, օպերատիվություն, ճշտապահություն:
- Գործավարության կազմակերպման հիմունքների իմացություն:
- Գործարար շփման վարվելակերպի իմացություն:
- Հայերենի - ազատ տիրապետում, անգլերենը – ցանկալի է:
- MS Office, AS-Bank, Internet փորձառու օգտագործող:

### ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք. Բերդ 4201, Մաշտոցի 37/2 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ [Laura.Holikyan@kamurj.am](mailto:Laura.Holikyan@kamurj.am) հասցեին՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻՋԲԸ՝  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

27 ապրիլի 2017  
09 մայիսի 2017